ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ս/թ հունվարի 10-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը Կապանում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 18 քաղաքացի:

Դրամական աջակցություն ստանալու խնդրանքով դիմել էր երեք, աշխատանքի տեղավորման համար՝ ինը, հողամասի սեփականաշնորհման, ինչպես նաև Ադրբեջանի տիրապետության տակ անցած վարելահողի դիմաց փոխհատուցում ստանալու հարցով՝ երկու, ուսման վարձավճարի համար՝ մեկ, հաշմանդամության կենսաթոշակի վերականգնման համար՝ մեկ, բիզնես-ծրագրով ՝ մեկ քաղաքացի: Ընդունելությանը մասնակցել է նաև ԼՂ-ից տեղահանված մեկ քաղաքացի, որը դիմել է համակարգիչ ստանալու խնդրանքով: Նրան տեղում տրվել է համակարգիչ:

Դրամական օգնության երեք դիմումներին տրվել է դրական պատասխան, իսկ աշխատանքի տեղավորման դիմումները վերցվել են հաշվառման:

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ